

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՍՈՅԱՆ ՄՅԱՍՆԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ 1908-1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Խառատյան Ա. Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր
Կարապետյան Ռ. Կ.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մարտիրոսյան Մ. Ե.

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. հունիսի 4-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդուն (0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. մայիսի 4-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

Դեպքերի ու իրադարձությունների լավագույն արտացոլման գործում մամուլն արժեքավոր աղբյուրներից է: Հայերի կոտորածների, Հայկական հարցի և, հատկապես, Սիրիայի արաբական մամուլում դրանց լուսաբանման, արտացոլման և մեկնաբանման ուսումնասիրությունն ունի ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքական արդիական նշանակություն, քանի որ ինչպես երիտթուրքական պետական գործիչները, այնպես էլ նրանց հաջորդած և ներկայիս թուրքիայի պաշտոնատար անձինք, ինչպես նաև տարբեր ժամանակաշրջանների թուրք պատմաբաններն իրենց գործերում խեղաթյուրում են պատմական ճշմարտությունը, փորձում թաքցնել 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբի հայերի կոտորածները: Սիրիայի արաբական պարբերական մամուլը կարևոր էր ոչ միայն հայ ժողովրդի 20-րդ դարի սկզբի պատմությունը գիտականորեն ուսումնասիրելու և լուսաբանելու, այլև ցեղասպանության քաղաքական ակունքները բացահայտելու, երիտթուրքական իշխանությունների կողմից 1909 թ. Կիլիկիայի հայերի կազմակերպած զանգվածային կոտորածները կոտորածների ընթացքում սպանված հայերի թվաքանակն ու նրանց կրած նյութական վնասների չափը:

Մեր ուսումնասիրության ընթացքում փորձել ենք հայտնաբերել, ուսումնասիրել Սիրիայի արաբական մամուլում Հայկական հարցի մասին տեղ գտած տեղեկությունները, որոնք հիմք կծառայեն նոր վերլուծությունների համար: Կարևոր խնդիր է հանդիսանում նաև սիրիական արաբական մամուլի օգնությամբ պարզելու 1908-1914 թթ. հայերի կոտորածների պատճառները, կոտորածների ընթացքում սպանված հայերի թվաքանակն ու նրանց կրած նյութական վնասների չափը:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին հրատարակված սիրիական արաբական պարբերական մամուլի՝ հայերին վերաբերող նյութերը: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել 19-րդ դարում տեղի ունեցած արաբական զարթոնքը և ուսումնասիրվող ժամանակաշրջանում Սիրիայի պարբերական մամուլի ընդհանուր կացությունը:
- Լուսաբանել 1908-1914 թթ. հայերի կոտորածների և դրան հաջորդած գաղթի արձագանքը սիրիական մամուլում:
- Ներկայացնել 1909 թ. Կիլիկիայում հայերի կոտորածների լուսաբանումը սիրիական մամուլում՝ անդրադառնալով Կ. Պոլսի, Սսի հայ պատրիարքների կատարած քայլերին, ականատեսների վկայություններին, օտարերկրյա թղթակիցների հաղորդումներին, սիրիական մամուլի վերլուծություններին:
- Լուսաբանել Հայկական բարենորոգումների (1912-1914 թթ.) խնդիրը սիրիական մամուլում:
- Ուսումնասիրել երիտթուրքերի օրոք Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում երիտթուրքերի կատարած

ընտրախախտումները և դրանց արտացոլումը սիրիական «Ալ-Թակադդում» թերթում:

- Ներկայացնել 1908 թ. հեղաշրջման լուսաբանումը «Ալ-Թակադդում» թերթում:
- Մերկացնել երիթուրքական իշխանությունների՝ հայ-քրդական հարաբերությունները սրելու, երկու ազգերի միջև թշնամանք առաջացնելու քաղաքականությունը:
- Արժեքավորել Օսմանյան խորհրդարանի հայ և թուրք պատգամավորների, Կ. Պոլսի հայ պատրիարքների որոշ ելույթներ, ճառեր, նամակներ:

ԱՏԵՆԱԽՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ:

Ատենախոսությունը շարադրված է տարաբնույթ սկզբնաղբյուրների և թեմային վերաբերող գրականության համադիր քննության, ներկայացված փաստերի պատմաքննական և պատմահամեատական վերլուծության սկզբունքի կիրառմամբ: Թեմայի համակողմանի և ամբողջական լուսաբանման տեսակետից մեթոդական իմաստով աշխատանքում խիստ կարևորվում է համալիր մոտեցումը ինչպես սկզբնաղբյուրների, այնպես էլ հրապարակի վրա եղած պատմագիտական ուսումնասիրությունների նկատմամբ: Կարևորություն է տրվում նաև սկզբնաղբյուրների և գիտական աշխատությունների համակցությանը, որի միջոցով պատմական դեպքերի գնահատականը դառնում է ավելի հավաստի և օբյեկտիվ: Եզրահանգումները կատարված են փաստական մյուսերի հետազոտության հիման վրա:

ԱՏԵՆԱԽՍՈՒԹՅԱՆ ԺԱՍՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 1908-1914 թթ., թեպետ հետազոտության տրամաբանությամբ՝ ատենախոսության մեջ հիշատակված որոշ փաստեր և իրադարձություններ դուրս են գալիս ժամանակագրական շրջանակներից: Հակիրճ ներկայացնելով 19-րդ դարում տեղի ունեցած արաբական զարթոնքի, ուսումնասիրվող ժամանակահատվածում սիրիական մամուլի ընդհանուր կացությունը, այնուհետև ներկայացվում է Հայկական հարցի լուսաբանումը սիրիական արաբական մամուլում:

ԱՏԵՆԱԽՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է 1908-1914 թթ. հայկական գաղթի, Կիլիկիայի հայերի 1909 թ. կոտորածի, 1910-1913 թթ. հայ-քրդական հարաբերությունների, 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների, երիտթուրքերի օրոք Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած խորհրդականական ընտրություններում կատարված ընտրախախտումների՝ սիրիական մամուլում անմիջական անդրադարձի մեջ: Մեզանում բացակայում է սիրիական մամուլում տվյալ թեմայի վերաբերյալ հանգամանալի և համակողմանի հետազոտությունը, ինչպես նաև հետազոտվող թեմայի խորությամբ առաջադրված խնդրի բազմազանությունը: Այս աշխատության մեջ փորձ է արվում լրացնել այդ բացթողումը: Բացի այդ՝ Սիրիայի արաբական մամուլի՝ կիլիկիահայության 1909 թ. կոտորածի մասին հաղորդած տեղեկությունները կարող են օգտակար լինել կոտորածի ընթացքում սպանված հայերի ընդհանուր թիվը ճշտելու, հայերի կրած նյութական վնասների հաշվառման գործում:

Խնդրո առարկա ժամանակահատվածում մենք ուսումնասիրել ենք հայերի մասին հիշատակումները «Ալ-Մուքթաբաս», «Ալ-Թակադդում», «Ալ-Շահբա», «Ալ-Շամ», «Ալ-Ումմա», «Ալ-Նիհամա» պարբերականներում: Չի բացառվում, որ եղել

են նաև սիրիական այլ թերթեր, որոնք նույնպես լուսաբանել են հայերի մասին կարևոր իրադարձություններ:

Հիրավի առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրվել 1908-1914 թթ. սիրիական արաբական պարբերական մամուլի էջերում տպագրված հայերին վերաբերող բազմաթիվ արժեքավոր նյութեր, որոնք, ըստ էության, ունեն սկզբնաղբյուրի նշանակություն: Սիրիական մամուլում տեղ գտած բազմաթիվ օտար սկզբնաղբյուրների, ինչպես նաև լրատվական նյութերի ուսումնասիրությունը մեծապես նպաստում է ինչպես ամբողջ թեմայի, այսպես էլ նրա առանձին կողմերի նորովի ուսումնասիրությանն ու նոր եզրահանգումներին:

Ատենախոսության մեջ ներկայացված նոր նյութերը և դրույթները կնպաստեն արդուլիամիդյան վարչակարգի, երիտթուրքական իշխանությունների՝ արևմտահայության նկատմամբ վարած ցեղասպան քաղաքականության վերաբերյալ բառավել ամբողջական պատկերացում կազմելուն, կբացահայտեն Հայոց ցեղասպանության շղթայի մաս կազմող 1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածների վերաբերյալ կարևոր փաստեր, երևան կհանեն երիտթուրքերի կառավարման շրջանում հայ-քրդական հարաբերությունների նոր մանրամասներ, 1894-1914 թթ. հայերի կոտորածների ու գաղթի նոր տեղեկություններ, ինչպես նաև կմերկայացվեն երիտթուրքական իշխանությունների՝ 1908 թ. խորհրդարանական ընտրություններում կատարած ընտրախախտումները, 1912-1914 թթ. հայկական քարենորոգումների իրականացման գործում նրանց որդեգրած քաղաքականության պատկերը: Իրադարձությունների գիտական վերարտադրությունն այս իմաստով դառնում է ամուր կռվան և փաստարկ՝ հայերի զանգվածային կոտորածները քողարկող ու ժխտող թուրքական պաշտոնական քարոզչության դեմ, որի մեթոդներն ու նպատակադրումներն առ այսօր շարունակում են հարատևել նենգափոխման ու կեղծարարության նույն հենքի վրա: Սիրիական արաբական մամուլի անմիջական ուղղակի տեղեկատվությունը հեղքում է հայկական կոտորածների ու գաղթի պատմության թուրքական կեղծարարների մտավարժանքները:

Գիտականից բացի ատենախոսությունն ունի նաև քաղաքական և գործնական նշանակություն: Հայկական հարցի լուսաբանումը սիրիական արաբական մամուլում և ատենախոսության մեջ կատարված հետևություններն արդիական են ու օգտակար: Ատենախոսությունում արված եզրակացություններն կարող են օգտագործվել Հայոց պատմությանը նվիրված դասընթացներում և դասագրքերի համապատասխան բաժիններում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի կողմից:

Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած գիտական 4 հոդվածներում, հանրապետական գիտաժողովներում ընթերցած զեկուցումներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՄՈՒԹՅՈՒՆ):

Հայկական հարցի լուսաբանումը Սիրիայի արաբական մամուլում 1908-1914 թթ. ատենախոսության համար ուսումնասիրության աղբյուր են հանդիսացել ինչպես հայկական, այնպես էլ արաբական, ռուսական ու այլ օտար լեզուներով աղբյուրները:

Ատենախոսության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել և առանցքային նշանակություն են ունեցել նախ և առաջ Սիրիայի արաբական հանրապետության երկու խոշոր քաղաքներում՝ Դամասկոսում և Հալեպում 1894-1914 թթ. հրատարակված սիրիական պարբերական մամուլի («Ալ-Թակադդում», «Ալ-Մուքթաբաս», «Ալ-Շամ», «Ալ-Ումմա», «Ալ-Շահբա», «Ալ-Նիսանա») նյութերը՝ (լրատվություն, թղթակցություններ, հոդվածներ, ակնարկներ և այլն) Հայկական հարցի և հայոց ցեղասպանության վերաբերյալ: Մեծ չափերով օգտագործվել են պատմության մեջ անգնահատելի տեղ և նշանակություն ունեցող ականատես-ժամանակակիցների հուշերն ու ուսումնասիրությունները:

Խնդրո առարկա հիմնահարցի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն Հայաստանի Ազգային Արխիվի տարբեր ֆոնդերում պահվող նյութերը¹: Մեծ արժեք են ներկայացնում նաև ՀՀ Ե. Չարենցի անվան Գրականության ու Արվեստի թանգարանի Թ. Ազատյանի², Ատենագրություն Ազգային ժողովոյ ֆոնդերում զետեղված նյութերը³:

Արաբական զարթոնքի, 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին սիրիական մամուլի կացության, սիրիական մամուլի զարգացման գործում հայերի դերի ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել արաբ բազմաթիվ հայտնի պատմաբանների աշխատությունները: Դրանցից կազենայինը մշել Հ. Օսմանի⁴, Ֆ. Տարազի⁵, Մ. Մուսլի⁶, Ն. Յաֆի⁷ և Խ. Մուսայի⁷, Մ. ալ-Մուդաուարի⁸, Ա. Խուդուրի⁹, Մ. Ալիան ալ-Մաշուտի¹⁰, Ի. Լոկայի¹¹, Ժ. Իլիասի¹², Ա. Մարուսայի¹³, Ա. Աբու Ֆախրի¹⁴, Ս.Սալազի¹⁵, Ժ.

¹ ֆ. 57, ց. 5, գգ. 14,49:

² Թ. Ազատյանի ֆ., գգ. 6420, 7231, 7500:

³ Գ. Ա. 5279, 5280, 5281, 5282, 5283, 5285:

⁴ دمشق 1877-1970 هـ شمس عثمان، الصحافة السورية ماضيها وحاضرها، 1997: Օսման Հ., Սիրիական մամուլի անցյալը և ներկան 1877-1970 թթ., Դամասկոս, 1997:

⁵ أديب طرازي تاريخ الصحافة العربية الجزء الثاني، بيروت 1913. Տարազի Ֆ., Արաբական մամուլի պատմություն, Երկրորդ մաս, Բեյրութ, 1913:

⁶ مؤصل، الصحافة العربية وموسو سوهل، دمشق 1997 Մուսլի Մ., Արաբական մամուլը և նրա հիմնադիրները, Դամասկոս, 1997:

⁷ خليل الموي، نضال الأرمن والعرب ضد الاستعمار العثماني، بيروت، 1989. Յաֆի Ն., Մուսա Խ., Արաբների և հայերի պայքարը օսմանյան զաղութացման դեմ, Բեյրութ, 1989:

⁸ 2891. مروان المنور، الأرمن عبر التاريخ، بيروت 1982. Ալ-Մուդաուար Մրվան, Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982:

⁹ أديب خضور، الصحافة السورية، نشأتها وتطورها واقعاها الراهن، دمشق 1972. Խուդուր Ա., Սիրիական մամուլը. հիմնումը, զարգացումը և ժամանակակից փուլը, Դամասկոս, 1972:

¹⁰ محمود عليان المشوط، تاريخ الصحافة السورية والعربية، دمشق 1986 Մ. Ալիան ալ-Մաշուտ, Սիրիական և արաբական մամուլի պատմությունը, Դամասկոս, 1986:

¹¹ 1976 قشمد، 1918-1800 سكندر لوقا، الحركة الادبية في دمشق 0081. Գրական շարժումը Դամասկոսում 1800-1918 թթ., Դամասկոս, 1976:

¹² 1983. تنويري، لوال عزجلا، (1865-1918) الى، تطور الصحافة السورية خلال مائة عام 5681. Լուալ Եզջիլա, Սիրիական մամուլի զարգացումը հարյուր տարում (1865-1965), առաջին մաս (1865-1918), Բեյրութ, 1983:

¹³ 1691. أديب مروه، الصحافة العربية نشأتها وتطورها، بيروت 1961. Արաբական մամուլ. հիմնումը և զարգացումը, Բեյրութ, 1961:

¹⁴ 5891. عدنان أبو فخر، الصحافة السورية بين النظرية والتطبيق، دمشق 1985. Աբու Ֆախր Ա., Սիրիական մամուլը թերոհայի և պրակտիկայի միջև, Դամասկոս, 1985:

Դայայի¹⁶, Աբդ ալ-Քարիմ Ռաֆիկի¹⁷, Մուհամմադ Քուրդ Ալի¹⁸, Ն. Բաբիլի¹⁹ աշխատությունները: Վերոնշյալ թեմաների ուսումնասիրության գործում արժեքավոր են նաև հայազգի պատմաբաններ Ե. Նաջարյանի²⁰, Ն. Հովհաննիսյանի²¹, Յ. Ազեզեանի²², Ն. Արիսյանի²³, ինչպես նաև ռուս նշանավոր արևելագետ Լ. Կոտլովի²⁴ աշխատությունները:

Հետազոտվող թեմայի համար նշված աղբյուրների հետ մեկտեղ կարևորություն են ներկայացնում հայ և օտար հեղինակների աշխատությունները, որոնց քննությունն առավել արդյունավետ է դարձնում սիրիական մամուլում Հայկական հարցի անաչառ լուսաբանումը:

Ատենախոսության «Կիլիկիահայության 1909 թ. կոտորածների լուսաբանումը սիրիական «Ալ-Թակադդում» թերթում» ենթագլխի համար աղբյուրագիտական կարևոր հիմք են հանդիսացել ինչպես ականատես-ժամանակակիցների հուշերը, այնպես էլ մի շարք հեղինակների տարբեր տարիների աշխատությունները: Հատկապես հիշատակության են արժանի Հ. Աշխյանի²⁵, Հ. Թերզյանի²⁶, Մուշեղ եպիսկոպոսի²⁷, Ս. Պարթևյանի²⁸, Հ. Առաքելյանի²⁹, Ռ. Գասպարյանի³⁰ և Հ. Սիմոնյանի³¹ աշխատությունները: Վերոնշյալ ենթագլխի շարադրմանը նպաստել են նաև Ա. Խառատյանի³² և Ա. Համբարյանի³³, ինչպես նաև «Հորիզոն»-ի³⁴,

¹⁵ 6991. سويل الملازي، الطباعة والصحافة في حلب، دمشق، 1996: Մալազի Ս., Հրատարակությունը և մամուլը Հալեպում, Դամասկոս, 1996:

¹⁶ 4891. جان دايه، صحافة الكواكب، بيروت، 1984: Դայա Ժ., Ալ Քաուաքբիի մամուլը, Բեյրութ, 1984:

¹⁷ 1916-1916. قشرد، 1993. 1916-1916. عبد الكريم رافق، الحرب، 1993: Ռաֆիկ Աբդ ալ-Քարիմ, Արաբները և օսմանցիները 1516-1916 թթ., Դամասկոս, 1993:

¹⁸ 1951. محمد كرد علي، مذكرات، الجزء الخامس، دمشق، 1951: Քուրդ Ալի Մուհամմադ, Հուշեր, 5-րդ մաս, Դամասկոս, 1951:

¹⁹ 1987. نندن بابل، صحافة وسياسة سورية في القرن العشرين، 1987: Բաբիլ Ն., Սիրիայի մամուլը և քաղաքականությունը 20-րդ դարում, Լոնդոն, 1987:

²⁰ Նաջարյան Ե., Արաբական մշակութային զարթոնքը, Եր., 1988:

²¹ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 2, Եր., 2004:

²² Ազեզեան Հ., Արաբական զարթոնքը և հայ գործիչները, Հալեպ, 2008:

²³ 2004. الأريسان، أصداء الإبادة الن الأرمنية في الصحافة السورية (1877-1930)، 2004: Արիսյան Ն., Հայոց ցեղասպանության լուսաբանումը սիրիական մամուլում (1877-1930 թթ.), Դամասկոս, 2004:

²⁴ Котлов Л. Н., Становление национально-освободительного движения на Арабском Востоке, М., 1975.

²⁵ Աշխյան Հ., Ատանայի եղեռնը և Գոնիայե հուշեր, Նյու Յորք, 1956:

²⁶ Թերզյան Հ., Կիլիկիո աղետը, Կ. Պոլիս, 1912:

²⁷ Մուշեղ եպիսկոպոս, Աղանայի ջարդը և պատասխանատուները, Կահիրե, 1909:

²⁸ Պարթևյան Ս., Կիլիկիո արհավիրքը, Կ. Պոլիս, 1909:

²⁹ Առաքելյան Հ., Ձեթուն: Տեղեզրական, ազգագրական և վարչական պատմություն, Թիֆլիս, 1896:

³⁰ Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, Եր., 2005:

³¹ Սիմոնյան Հ., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Եր., 2009:

³² Խառատյան Ա., Աղանայի 1909 թ. կոտորածի լուսաբանումը արևմտահայ մամուլում, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2009, № 1:

³³ Համբարյան Ա., Կիլիկիայի 1909 թ. կոտորածները, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1988, № 4:

³⁴ «Հորիզոն», 1910, 23 մարտի:

«Դաշինք»-ի³⁵, «Բյուզանդիոն»-ի³⁶ և «Ազատամարտ»-ի³⁷ էջերում լույս տեսած հոդվածները:

1909 թ. Կիլիկիայի հայերի կոտորածի լուսաբանումը եզիպտական մամուլում ուսումնասիրման առումով մեծ արժեք է ներկայացնում դոկտոր Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամի³⁸ աշխատությունը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ-քրդական հարաբերությունների, ինչպես նաև երիտթուրքական իշխանությունների՝ հայ-քրդական բախումներ հրահրելու քաղաքականության ուսումնասիրման առումով արժեքավոր են Վ. Բայբուրդյանի³⁹, Ս. Պողոսյանի⁴⁰, Ա. Համբարյանի⁴¹, Կ. Իզմիրլյանի⁴² և Գ. Ալիևի⁴³ աշխատությունները, ինչպես նաև «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածուն⁴⁴:

Ատենախոսության «Հայկական բարենորոգումների լուսաբանումը սիրիական «Ալ-Թակադդուն» թերթում» ենթագլխի համար աղբյուրագիտական հիմք են ծառայել ինչպես սիրիական «Ալ-Թակադդուն» թերթի, այնպես էլ եզիպտոսում հրատարակվող «Հուսաբեր»⁴⁵ թերթի տարբեր համարներում լույս տեսած հոդվածները: Վերոնշյալ խնդրի ուսումնասիրության առումով արժեքավոր են բազմաթիվ հայտնի հայ պատմաբանների աշխատությունները: Դրանցից կուզենայինք նշել Հ. Բոյաջյանի⁴⁶, Ջ. Կիրակոսյանի⁴⁷, Ս. Պողոսյանի⁴⁸, Ե. Օտյանի⁴⁹, Բաբգեն վարդապետի⁵⁰, Լ. Քոնթանտոնի⁵¹ աշխատությունները:

Ատենախոսության «Օսմանյան խորհրդարանական ընտրությունների լուսաբանումը «Ալ-Թակադդուն» թերթում» և «1908 թ. հեղափոխության լուսաբանումը «Ալ-Թակադդուն» թերթում» ենթագլուխների համար աղբյուրագիտական հիմք են ծառայել ինչպես հայ, այնպես էլ արաբ և օտար այլ

³⁵ «Դաշինք», 1910, 10 ապրիլի:

³⁶ «Բյուզանդիոն», 1909, 10 մայիսի:

³⁷ «Ազատամարտ», 1909, 25 հուլիսի:

³⁸ ذوفمبر، قاهرة عدد 7، وأثرها في مصر، اريك، 1909 محمد رفعت الامام، منذ يح أضنه أبو ريل 2010 Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իմամ, 1909 թ. ապրիլի կոտորածները և դրանց արձագանքը եզիպտոսում, Արեգ, Կահիրե, 2010, նոյեմբեր, № 7:

³⁹ Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Եր., 1989, Բայբուրդյան Վ., Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008:

⁴⁰ Պողոսյան Ս. Կ., Քրդերը և Հայկական հարցը, Եր., 1991:

⁴¹ Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Եր., 1999:

⁴² Իզմիրլյան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Պենոլթ, 1964:

⁴³ Алиев Г. З., Турция в период правления младотурок (1908-1918гг.), М., 1972.

⁴⁴ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 7, Քրդագիտություն, Եր., 1975:

⁴⁵ «Հուսաբեր», Կահիրե, 1913, № 121, 166:

⁴⁶ Բոյաջյան Հ., Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ., Եր., 2010:

⁴⁷ Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Եր., 1965:

⁴⁸ Պողոսյան Ս., Պողոս Նուբար փաշա. Ազգային գործիչը, Եր., 2004:

⁴⁹ Օտյան Ե., Պողոս Նուբար փաշա (կենսագրական նյութեր), Կ. Պոլիս, 1913:

⁵⁰ Բաբգեն վարդապետ, Հայկական հարցը և Պողոս Նուբար փաշան, Վաղարշապատ, 1914:

⁵¹ Քոնթանտոն Լ-տըր, Հայկական հարցի վերջին փուլերը, Կ. Պոլիս, 1913:

պատմաբանների աշխատությունները: Հատկապես հիշատակության են արժանի Ս. Սապահ-Գյուլյանի⁶², Մ. Վարանդյանի⁶³, Ա. Ավագյանի⁶⁴, Հ. Սիմոնյանի⁶⁵, Ջ. Կիրակոսյանի⁶⁶, Վ. Փափազեանի⁶⁷, Ա. Գասպարյանի⁶⁸, Հ. Սիմոնյանի⁶⁹, Ա.Ն. Մանդելշտամի⁶⁰, Հ. Կիյակի⁶¹, Թ. Բռուի⁶², Ի. Շափիկովայի⁶³, Մ. Քոչարի⁶⁴, Յ. Պետրոսյանի⁶⁵, Լ. Կոտլովի⁶⁶ և Է. Թունայի⁶⁷ աշխատություններն ու հոդվածները:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանի հետ կապված տարաբնույթ հարցերի պարզաբանմանը նպաստել են նաև Ջ. Անտոնիոսի⁶⁸, Դ. Ֆրոմկինի⁶⁹, Ջ. Ջեյնի⁷⁰, Ա. Սառոյի⁷¹, Յու. Մ. Չուռեի⁷², Ա. Նովիչևի⁷³, Ա.Մ. Կոլյուբակինի⁷⁴ աշխատությունները:

ԱՏԵՆԱՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենաստությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության

⁵² Սապահ-Գյուլյան Ս., Պատասխանատուները, Փրավիտենս, 1916:

⁵³ Վարանդյան Մ., Հ. Յ. Դաշնակցության պատմություն, հ. 2, Կահիրե, 1950:

⁵⁴ Ավագյան Ա., Հայ քաղաքական կուսակցությունների և երիտթուրքերի փոխհարաբերությունները 1908-1914 թթ., Եր., 1996:

⁵⁵ Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Եր., 1996:

⁵⁶ Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք առաջին, Եր., 1982:

⁵⁷ Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 2, 1952, Պեյրուք:

⁵⁸ Գասպարյան Ա., 1908 թ. խորհրդարանական ընտրություններեն Օսմանյան կայսրության արաբական վիլայեթներում, Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 24, Եր., 2005:

⁵⁹ Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախտությանը և քաղաքականությունը, Եր., 1986:

⁶⁰ Մանդելշտամ Ա.Ն., Երիտասարդ թուրքերի պատմությունը, Էջմիածին, 1916:

⁶¹ 1908-1918 دمشق 2003 Կիյակի Հ., عثمانيّة في الممر بية المحركة، قبايلي حسن، Արաբական շարժման ուղղությունը օսմանցիների աչքերում (1908-1918), Դամասկոս, 2003:

⁶² 1908-1913 دمشق، العثمانيّ الادس توريّ العمد في ال ترك و العرب، برو توف يقى الأذك تور. Թ., Արաբները և թուրքերը Օսմանյան սահմանադրական շրջանում (1908-1918), Դամասկոս, 1991:

⁶³ Шпилькова И., Младотурецкая певолуция 1908-1909 гг., М., 1977.

⁶⁴ Кочар М., Армяно-турецкие общественно политические отношения и Армянский вопрос, Ереван, 1988.

⁶⁵ Петросян Ю. А., Младотурецкое движение (вторая половина 19-ого - начало 20-века), М., 1971.

⁶⁶ Котлов Л., Становление национально-освободительного движение в арабских странах Азии 1908-1914 гг., М., 1986.

⁶⁷ Тума Э., Национально-освободительное движение и проблемы арабского единства, М., 1977.

⁶⁸ Antonius G., The Arab Awakening. The history of the Arab national movement, N.Y, 1947.

⁶⁹ Fromkin D., The fall of the Ottoman Empire and the creation of the modern Middle East, N.Y., 1989.

⁷⁰ Zein N. Zeine, Arab Turkish Relations and the Emergence of Arab Nationalism, Beirut, 1958.

⁷¹ Saroi A., La jeune Turqui et la revolution. Paris, 1912.

⁷² Youssef M. Chhoueirri, Arab Nationalism. A History Nation and State in the Arab World. Oxf., 2000.

⁷³ Новичев А., Очерки экономики Турции до мировой войны, Москва-Ленинград, 1937.

⁷⁴ Коллюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Турции, т. 1, ч. 1, СПб, 1888.

ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 137 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է ատենախոսության գիտական նորույթը, տրվել է հիմնախնդրին վերաբերող սկզբնաղբյուրների ու առկա գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ **«ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՈՒԱՅԻՆ ՀԻՇՆԱՍԿՈՒՄՆԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ (1877-1914 ԹԹ.)»**, բաղկացած է երկու ենթազվիսից:

Առաջին ենթազվիսում «Արաբական ազգային մշակութային կյանքի զարթոնքը և Սիրիայի արաբական մամուլը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին», ամփոփ կերպով ներկայացված է արաբական ազգային մշակութային կյանքի զարթոնքը. ինչպես նաև Սիրիայի արաբական մամուլի կացությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին:

19-րդ դարը արաբների պատմության մեջ մտել է նաև որպես արաբական Նահդայի՝ արաբական ազգային մշակութային կյանքի և քաղաքական մտքի արթնացման կամ զարթոնքի դարաշրջան: Նահդա արաբերեն բառը հենց այդպիսի բովանդակություն ունի՝ զարթոնք, վերածնունդ, բարձրացում: Հենվելով հոգևոր մշակութային և պատմական հարուստ ժառանգության վրա՝ արաբները ձգտում էին զարկ տալ ազգային վերածննդին, իրենց ազգային առաջնորդների միջոցով տարածել լուսավորականությունը, ժողովրդի մեջ արթնացնել ազգային ինքնագիտակցությունը և անջատել ու անկախացնել արաբական հայրենիքը: Այս նպատակն իրականացնելու համար բացվում են դպրոցներ, հրատարակվում թերթեր, նոր թափով սկսվում է լուսավորականների աշխատությունների թարգմանությունը և հերոսական անցյալի նկարագրությունը, հիմնվում են գաղտնի խմբակներ ու կազմակերպություններ: Թուրքերն արաբական ազգային զարթոնքին բացասաբար են արձագանքում և ձգտելով կանխել այն՝ փակում են գաղտնի կազմակերպությունները, առաջնորդներին սպառնում անձի ու զույքի անվտանգություն, հարցերում, ահ ու սարսափ տարածում ժողովրդի մեջ⁷⁵: Սակայն Օսմանյան իշխանությունների ձեռնարկած քայլերն ի զորու չէին կասեցնելու արաբական ազգային շարժման վերելքը:

19-րդ դարում տեղի ունեցած արաբական ազգային մշակութային կյանքի և քաղաքական մտքի զարթոնքը պարարտ հող նախապատրաստեց արաբական մասնավորապես սիրիական մամուլի զարգացման համար:

Երբ հայացք ենք նետում սիրիական մամուլի վրա, տեսնում ենք, որ այն սկզբնավորվել է հենց այն ժամանակ, երբ Օսմանյան կայսրությունում պաշտոնապես հիմք է դրվել թերթերի հրատարակությանը: Սակայն արդուլհամիդյան շրջանում թերթերի տպագրությունը սահմանափակվել է: Առաջնությունը տրվում էր իշխանամետ թերթերին, որոնք կառավարության մշտական ուշադրության պայմաններում էին գործում: Իսկ ինչ վերաբերում է ազգասիրական, հայրենասիրական ու ազատասիրական թերթերին, ապա դրանք գործում էին կամ գաղտնի, կամ արտերկրում, կամ արդեն փակվել էին⁷⁶: Սիրիական թերթերը

⁷⁵ 2891. المدور، الأرمين عبر التاريخ، بيروت، 1982: 24.

⁷⁶ 1972. أديب خضور، الصحافة السورية، نشأتها وتطورها واقامها الأرائي، دمشق.

Սիրիական մամուլը. հիմնումը, զարգացումը և ժամանակակից փուլը, Դամասկոս, 1972, էջ 25:

ներկայացնում էին ոչ միայն Օսմանյան կայսրության ներքին ու արտաքին իրավիճակը, այլև կայսրության բոլոր ժողովուրդների դեմ ուղղված թուրքացման քաղաքականությունը: Սիրիական թերթերում տպագրված հոդվածները գլխավորապես վերաբերում էին հետևյալ թեմաներին.

- Աբդուլ Համիդ Երկրորդի և երիտթուրքերի շրջանում ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող քաղաքականության լուսաբանում:
- Արաբական մշակույթի զարգացումների լուսաբանում:
- Թուրքացման քաղաքականության քննադատություն և ազատասիրության դրվատում⁷⁷:

1908 թ. առաջ տպագրված թերթերում չկար միասնություն և ընդհանուր կարծիք: Բանն այն է, որ դրանք ունեին տարբեր հեռանկարներ և մտածում էին իրական պատկերները ցուցադրելու զգուշավորության մասին⁷⁸: 1908 թ. երիտթուրքերի հեղաշրջումից հետո որոշ թերթեր կրկին վերահրատարակվելու իրավունք են ստանում, բացվում են նորերը: Երիտթուրքերի իշխանության գալուց հետո Օսմանյան կայսրությունում խոսքի ազատությունն որոշակիորեն զարգացում է ապրում. թերթերը սկսում են տպագրել ազատության և անկախության թեմաներին վերաբերող հոդվածներ: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը նոր էջ բացեց նաև սիրիական մամուլում: Ոչ միայն ավելանում է թերթերի քանակը, այլև փոխվում է դրանց թեման, հրատարակությունը լինում է նաև արաբերեն: Անցում է կատարվում ազատախոսությանը: Սակայն հոգևոր-մշակութային առաջընթացը երկար չի տևում: Դարձյալ հայացք է նետվում թուրքացման քաղաքականությանը, և դրվում է թուրանապաշտական գաղափարների հիմքը⁷⁹: Երիտթուրքերը սկսեցին գործնականում կիրառել իրենց նպատակները, գաղափարախոսությունը՝ այն է ոչնչացնել կամ թուրքացնել կայսրության ոչ թուրք տարրերին:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայերի դրության, գաղթի, կոտորածների լուսաբանումը սիրիական մամուլում», ներկայացվում է հայերի մասին առաջին հիշատակումները Սիրիայի արաբական մամուլում:

1877-1914 թթ. սիրիական մամուլը ներկայացրել է Օսմանյան կայսրությունում հայերի վիճակի, ջարդերի և գաղթերի պատկերը, անդրադարձել օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների ելույթների, նամակների լուսաբանմանը: Սիրիական թերթերում հայերի հետ առնչվող նյութերի անդրադարձը տեղի է ունեցել հետևյալ կերպ. 1. նյութեր, 2. հեռագրեր, 3. մեկնաբանություններ: Շատ են հոդվածները հայ-արաբական հարաբերությունների մասին:

Հայոց ցեղասպանությանը վերաբերող նյութերում սիրիական մամուլն անդրադարձել է ցեղասպանության հետ կապված պատմական բոլոր շրջաններին, որն ապրել է հայ ժողովուրդը՝ հարձակումներ, ջարդ, բռնազաղթ, հայրենագրվում, օտար երկրներում գաղթօջախների ձևավորում: Դրանով այն

⁷⁷ Կայսրության և Արևմտյան Արևելքի լուսաբանումը սիրիական մամուլում (1877-1930 թթ.), Դամասկոս, 2004: 2004. دمشق

⁷⁸ 1986, ص. 64. U. Ալխան ալ-Մաշուտ, Սիրիական և արաբական մամուլի պատմությունը, Դամասկոս, 1986, էջ 64:

⁷⁹ 1976, ص. 185. Լուկա Ի., Գրական շարժումը Դամասկոսում 1800-1918 թթ., Դամասկոս, 1976, էջ 185:

դարձել է այդ ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմության անհերքելի ապացույց, որը արտացոլում է իրականությունը՝ որպես պատմական փաստաթուղթ: Դրանում իր ուրույն տեղն ունի Սիրիայի տարբեր քաղաքներում հաստատված հայության կյանքի նկարագրումը:

Մենք, իրոք, մեծ նշանակություն ենք տալիս սիրիական մամուլին, որն օսմանյան բռնապետության պայմաններում բազմաթիվ տեղեկություններ է հայտնել հայերի մասին: Սիրիական մամուլը 1877-1914 թթ. արժեքավոր տեղեկություններ է հայտնում հայերի կոտորածների ու գաղթի մասին: Այն կարևոր աղբյուր է Հայոց ցեղասպանության, ջարդերի և գաղթերի վերաբերյալ: Լրագրողները Հայոց ցեղասպանության և հայերի գաղթի մասին տեղեկությունները հաղորդել են արժանահավատորեն:

Սիրիական մամուլի՝ հայերի մասին հիշատակումները մեկ անգամ ևս ընդգծել են Հայկական հարցի կարևորությունը:

Երկրորդ գլուխը՝ **«ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՎԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ «ԱԼ-ԹԱԿԱԴՊՈՍ» ԹԵՐԹՈՒՄ (1908-1914 ԹԹ.)»**, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում «1908 թ. հեղաշրջման լուսաբանումը», ներկայացված է 1908 թ. հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակը:

20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունը կորցրել էր իր վաղեմի հզորությունը և իրենից ներկայացնում էր հետամնաց, թույլ զարգացած, կիսագաղութային պետություն, որի կառավարման համակարգը և հասարակական կարգերը վերջնականապես սպառել էին իրենց: Սուլթանական իշխանությունը ջանք չէր խնայում պահպանելու և ամրապնդելու իր ազդեցությունը արաբական ու հայկական վիլայեթներում: Կենտրոնական, նահանգային իշխանությունները ճնշումների և հետապնդումների միջոցով ամեն կերպ փորձում էին վերացնել ցանկացած այլախոհություն: Հատկապես խստորեն պատժվում էին նրանք, որոնց կասկածում էին ընդդիմադիր գործունեության մեջ: Բացի այդ՝ սուլթանական իշխանության կողմից լիովին անտեսվում էին կայսրության ոչ թուրք ժողովուրդների ազգային առանձնահատկությունները, նրանց ազգային շահերն ու պահանջները: Ստեղծված իրադրության մեջ ասպարեզ եկավ քաղաքական այն ուժը, որին հաջողվեց լիովին փոխել Օսմանյան կայսրությունում դեպքերի զարգացման հետագա ընթացքը:

1908 թ. հեղաշրջման նախապատրաստմանն ու իրականացմանն իրենց աջակցությունը ցուցաբերեցին Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդները, այդ թվում նաև արաբական, հայկական ազգային կազմակերպությունները, խմբավորումներն ու առանձին գործիչներ: Երիտթուրքերը իրենց առջև խնդիր էին դրել ձեռք բերել երկրի քաղաքական, սոցիալական և մշակութային զարգացման հնարավորությունն ու ապահովել Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների հավասար իրավունքները, ինչը համապատասխանում էր կայսրության ժողովուրդների պահանջներին և ձգտումներին ու պայմանավորեց նրանց աջակցությունը երիտթուրքերին:

19-րդ դարի վերջին հայ ազգային ազատագրական պայքարի վերելքը ստիպեց ինչպես սուլթան Աբդուլ Համիդին, այնպես էլ թուրքական ընդդիմադիր ուժերին՝ հանձնին երիտթուրքերի, անմիջական բանակցությունների մեջ մտնել

հայ քաղաքական ուժերի հետ⁸⁰, չնայած վերջիններս նույնպես թշնամական դիրքորոշում ունեին հայ ժողովրդի ազատագրական պայքարի նկատմամբ:

1908 թ. հուլիսին Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի կողմից կատարվում է հեղաշրջում, որը գոհունակությամբ է ընդունվում կայսրության ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում՝ արևմտահայության կողմից⁸¹: Սակայն այդ համատարած խանդավառությունը չափազանց կարճատև եղավ և շուտով փոխարինվեց լիակատար հիասթափությամբ, քանի որ այս շրջանում տեղի ունեցած բռնություններն ու հանցագործությունները իրենց չափերով գերազանցեցին նախորդ ռեժիմի տարիներին տեղի ունեցածներին:

«Ալ-Թակադդում» թերթն իր համարներում մեծ տեղ է հատկացրել հեղաշրջումից հետո կայսրությունում տիրող իրավիճակի մասին օսմանյան խորհրդարանի պատգամավորների էլույթների լուսաբանմանը⁸²: Թերթն իր համարներում անդրադարձել է նաև երիտթուրքական հեղափոխության վերաբերյալ օտար մտավորականների կարծիքների լուսաբանմանը⁸³: Սիրիական «Ալ-Թակադդում» թերթն արաբախոս ընթերցողներին հաղորդում էր, որ երիտթուրքերի նախահեղափոխական խոստումները դատարկ ու սին էին: Շատ շուտով բացահայտվում է նրանց իրական դեմքը: Թերթի հոդվածներից կարող ենք եզրակացնել, որ ինչպես օտար, այնպես էլ թուրք մտավորականները, օսմանյան խորհրդարանի թուրք պատգամավորները ևս ընդունել են, որ երիտթուրքական վարչակարգը բազում լիամիտյան բռնակալական վարչակարգի հետևորդն է ու ոչնչով չի տարբերվում նախորդ վարչակարգից:

Երկրորդ ենթագլխում՝ «Օսմանյան խորհրդարանական ընտրությունների լուսաբանումը», ներկայացված է ընտրությունների, դրանց հետ կապված հայ պատրիարքի բողոք-ուղերձների լուսաբանումը «Ալ- Թակադդում» թերթում:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից անմիջապես հետո երիտթուրքերի առաջնային խնդիրներից մեկը դարձավ ընտրությունների անցկացումն ու խորհրդարանի ձևավորումը, որը պետք է դառնար իրենց իշխանության օրինականացման և ամրապնդման հիմքը:

Օսմանյան կայսրությունում 1908 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին անցկացված խորհրդարանական ընտրություններն առավել ակնհայտ դարձրին կայսրությունում ձևավորված քաղաքական հոսանքների միջև պայքարը: Այս պայքարը հիմնականում ծավալվում էր Սահմանադրության և հին վարչակարգի կողմակիցների միջև, որոնցից յուրաքանչյուրը տարբեր միջոցներով փորձում էր առավել չափով պատգամավորական տեղեր ապահովել խորհրդարանում: Չնայած բարենպաստ պայմաններին, իթթիհականները կայացած երկու խորհրդարանական ընտրություններում իրենց կողմնակիցների մեծամասնությունն ապահովելու համար դիմում էին նաև տարատեսակ ընտրախախտումների, ինչպես նաև վարչական ճնշումների, որոնց մերկացմանը նույնպես

⁸⁰ Երիտթուրքերի նախաձեռնությունը՝ կապեր հաստատել հայ քաղաքական ուժերի հետ հետապնդում էր երկու նպատակ. նախ օգտագործել հայ քաղաքական ուժերին Աբդուլ Չամիդի բռնապետության դեմ պայքարում, ինչպես նաև «հայերի հետ դաշնակցելով՝ լուծում տալ Հայկական հարցին»:

⁸¹ Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991, էջ 127-128:

⁸² Տես «Ալ-Թակադդում», Հալեպ, 1910, № 160:

⁸³ Նույն տեղում, № 115:

անդրադարձել է «Ալ-Թակադդուն» թերթը⁸⁴: 1908 թ. նոյեմբերի վերջին ընտրություններն ավարտվեցին: Ի վերջո երիտթուրքերին հաջողվեց խորհրդարանում ապահովել թուրքական տարրի գերակայությունն այլազգի պատգամավորների հանդեպ:

«Ալ-Թակադդուն» թերթն իր համարներում անդրադառնում է նաև հայ պատրիարքի՝ խորհրդարանական ընտրությունների անցկացման վերաբերյալ բողոք-ուղերձների լուսաբանմանը⁸⁵: Խորհրդարանական ընտրություններն առաջին միջոցառումն էր, որի ընթացքում ի հայտ եկան երիտթուրքական կառավարության հռչակած սկզբունքների և իրական քաղաքականության հակասությունները, ինչը որոշակիորեն սթափեցրեց «հեղափոխական» ոգևորությամբ տոգորված Օսմանյան կայսրության հպատակ ժողովուրդներին՝ այդ թվում հայերին:

Երրորդ ենթագլխում՝ «Հայկական բարենորոգումների լուսաբանումը (1912-1914 թթ.)», ներկայացված է Արևմտյան Հայաստանում բարենորոգումների լուսաբանումը:

1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրքերի վարած հայահալած քաղաքականությունը նախադրյալներ ստեղծեց Հայկական հարցի վերաբացման համար, որին նպաստեց նաև 1912 թ. Բալկանյան առաջին պատերազմում թուրքիայի կրած պարտությունը: Օգտվելով ստեղծված իրադրությունից՝ արևմտահայությունն իր կացության բարելավման խնդրանքներով նորից որոշում է դիմել մեծ տերությունների, առաջին հերթին Ռուսաստանի աջակցությանը⁸⁶, որը նույնպես հետաքրքրված էր նրանց կացության բարելավմամբ: Այս հարցում Ռուսաստանն ուներ իր պետական շահերը. Արևմտյան Հայաստանում ռուսական դիրքերի ամրապնդումից հետո այն ռազմական հեմակետ էր դիտվում դեպի հարավ (Պարսից ծոց) հետագա առաջխաղացման համար:

1912-1913 թթ. Օսմանյան թուրքիայում բարենորոգումների իրականացումն օրակարգի հարց էր դարձել եվրոպական մասուն տիրույթները կորցնելու պատճառով: Հայկական հարցը միջազգային քննարկման առարկա դարձնելու առաքելությունն իր վրա է վերցնում Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը: Տերություններին ուղղվելիք դիմումները մեկ ուղղությամբ կենտրոնացնելու համար որոշում է իր անունից գործող պատվիրակ ունենալ եվրոպայում: Այդ պատասխանատու պաշտոնը տրվում է եգիպտահայ ականավոր հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշային, որի նշանակումը բացառիկ դրական արձագանք գտավ հայ ազգային շրջաններում և մամուլում⁸⁷: 1913 թ. հունվարի 4-ին Պողոս Նուբարի գլխավորությամբ ստեղծվում է Ազգային պատվիրակություն, և առանց ժամանակ կորցնելու մեկնում է եվրոպա: Հայկական պահանջները ներկայացնելու համար անհրաժեշտ էր ունենալ բարենորոգումների ծրագիր, և Պ. Նուբարն եկավ այն համոզման, որ տվյալ պայմաններում տերություններին պետք է ներկայացնել բարենորոգումների այնպիսի պահանջներ, որոնք չեն հակասի նրանց շահերին: Պողոս Նուբարը կազմում է նախագիծ, ըստ որի թուրքիայի հայկական վեց վիլայեթներից (Էրզրում, Վան, Բիթլիս, Սեբաստիա, հարբեթ, Դիրարբեթի) կազմվելիք մեկ նահանգում պետք

⁸⁴ Տես «Ալ-Թակադդուն», 1909, № 10:

⁸⁵ Նույն տեղում, 1913, № 468, 470:

⁸⁶ Սիմոնյան Հ., Անդրամիկի ժամանակը, գիրք Ա, Եր., 1996, էջ 364:

⁸⁷ «Յուսաբեր», Կահիրե, 1913, № 121:

է իրականացվեին բարեփոխումներ ֆինանսական, տնտեսական, արդարադատության բնագավառներում⁸⁸: Հետագայում նրանում որոշակի փոփոխություններ են կատարվում կապված Կ. Պոլսի հայոց պատրիարքության առարկությունների հետ:

1913 թ. ղեկտնմբերի կեսերից հայկական բարենորոգումների շուրջ ռուսգերմանական բանակցությունները մտնում են վճռական փուլ: Եվ ի վերջո երկարատև բանակցություններից հետո Թուրքիայում ռուսական գործերի հավատարմատար Կ. Գուլկևիչը և մեծ վեզիր Սայիդ Հալիմը 1914 թ. հունվարի 26-ին ստորագրում են հայկական բարենորոգումների վերաբերյալ համաձայնագիր: Չնայած Պողոս Նուբար փաշայի եռանդուն գործունեությանը՝ այս անգամ ևս հայկական բարենորոգումների իրականացումը մնաց միայն թղթի վրա: 20-րդ դարի սկզբին ստեղծված աշխարհաքաղաքական կացությունը, մեծ տերությունների միջև գույություն ունեցող տարածայնությունները, ինչպես նաև Օսմանյան կայսրության որդեգրած քաղաքականությունը կրկին խափանեցին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու խնդրի լուծումը:

«Ալ-Թակադդում» թերթն արաբախոս ընթերցողներին հայտնում է Թուրքիայի մեթոդական քաղաքականությունը հայկական բարենորոգումների անցկացման հարցում, մերկացնում է այս հարցի վերաբերյալ մեծ տերությունների դիրքորոշումները: Բացի այդ՝ թերթը բացահայտում է թուրքական իշխանությունների Ազգային պատվիրակության գործունեությունը խոչընդոտելու համար ձեռնարկած քայլերն ու բարենորոգումների իրականացման համար մղվող պայքարում մեծ կարևորություն տալիս Պողոս Նուբար անձին:

Երրորդ գլուխը՝ «ՀՍՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ «ԱԼ-ԹԱԿԱԴՂՈՒՄ» ԹԵՐԹՈՒՄ», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Կիլիկիա հայության 1909 թ. կոտորածի լուսաբանումը», մերկայացված է Կիլիկիայի հայերի 1909 թ. կոտորածի լուսաբանումը «Ալ-Թակադդում» թերթում:

1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրքերը շարունակեցին համիդյան բռնակալական ռեժիմի քաղաքականությունը: Նման վարքագծի ամբողջ էությունը բացահայտվեց 1909 թ. ապրիլին Կիլիկիայում՝ մասնավորապես Ադանայում և նրա շրջակա գյուղերում կազմակերպված ջարդերի ընթացքում, որին զոհ գնաց մոտ 30000 հայ:

Կիլիկիայի կոտորածների լուսաբանման անդրադարձավ նաև արաբական մամուլը: Կոտորածներից հետո Եգիպտոսի քրիստոնեական մամուլը՝ մասնավորապես Ալեքսանդրիայում ամերիկյան միսիոներական քարոզչություն իրականացնող «Սուրշիդ» ամսագիրը, հրատարակեց Կիլիկիայում ջարդերի մասին հոդվածներ, որոնցում ջարդերի գլխավոր պատճառ նշում է կրոնական գործոնը⁸⁹: Սակայն Եգիպտոսի մուսուլմանական հասարակությունն անմիջապես հեղքեց այն. մասնավորապես Ազհարի շերիֆը Կիլիկիայում կոտորածների վերաբերյալ ֆեթվա (ուղերձ) հրապարակեց, որտեղ նշվեց, որ իսլամն անմեղ էր

⁸⁸ Բոյաջյան Հ., Պողոս Նուբար փաշան և բարենորոգումների խնդիրը Արևմտյան Հայաստանում 1912-1914 թթ., Եր., 2010, էջ 58:

⁸⁹ نوفمبر، القاهرة عدد 7، وأثرها في مصر، اريك، 1909 محمد رفعت الإمام، مدل بيح أصدنه أبريل 2010. ص. 2010
Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իման, 1909 թ. ապրիլի կոտորածները և դրանց արձագանքը Եգիպտոսում, Արեգ, Կահիրե, 2010, նոյեմբեր, № 7, էջ 2:

քրիստոնյաների արյունահեղության մեջ: Իսկ Եգիպտոսի չեզոք մամուլի կողմից («Ալ-Աիրամ», «Ալ-Կահիրե», «Ալ-Չարիդա», «Ալ-Աֆքար», «Ալ-Նար») երկու հատուկ թղթակիցներ ուղարկվեցին Ադանա՝ իրականությունը պարզելու համար: Ուսումնասիրությունն ավարտելուց հետո նրանք մի քանի հոդված հրատարակեցին: Թղթակիցները նշում էին, որ իսլամն անպարտ է, և կոտորածների գլխավոր պատճառն Ադանայում քաղաքական, տնտեսական ու հասարակական ոչ հայանպաստ գործոններն են⁹⁰:

Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի ջարդերի ու կոտորածների՝ այդ թվում նաև Կիլիկիայում ջարդերի, պատճառների, դրան հաջորդած ամիսներին հայերի վիճակի, հայ որբերի խնդիրների և հայկական գաղթի լուսաբանմանն է անդրադարձել նաև սիրիական մամուլը՝ մասնավորապես Չալեպի «Ալ-Թակադդում» թերթը⁹¹: «Ալ-Թակադդումը» Կիլիկիայում կոտորածների վերաբերյալ համարներում մեծ տեղ է հատկացրել կոտորածի ժամանակ հայերի կրած նյութական կորուստների, կոտորածի հետևանքով անօթևան մնացած հայերի, որբերի, այրիների վիճակի նկարագրություններին⁹²: Թերթն իր համարներում հանգամանորեն անդրադառնում է Կիլիկիայում ջարդերի պատճառների ուսումնասիրմանը⁹³: Ճիշտ է, թերթը որպես կոտորածների գլխավոր պատճառ նշում է տնտեսական գործոնը, սակայն միաժամանակ հայտնում է, որ կոտորածների հրահրման գործում առաջնային դեր են ունեցել օսմանյան իշխանությունները: Կարծում ենք, որ Կիլիկիայի հայերի կոտորածն իր հիմքում ուներ քաղաքական հին պատճառը՝ հայերին բնաջնջելը, որպես Օսմանյան կայսրության ամբողջականության ապահովման գառանցական փաստարկ և պետական քաղաքականություն: Տնտեսական պատճառն այստեղ ուներ երկրորդական, գալթակղիչ և հրահրող նշանակություն:

Երկրորդ ենթագլխում «Չայ-քրդական հարաբերությունների լուսաբանումը 1908-1914 թթ.», ներկայացված է խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ-քրդական հարաբերությունների լուսաբանումը:

Չայ և քուրդ ժողովուրդների պատմական կապերն ու առնչությունները դարերի պատմություն ունեն: Ապրելով մերձավոր հարևանությամբ՝ այս երկու ժողովուրդները պատմական զարգացման ընթացքում ունեցել են բազմաթիվ ընդհանրություններ: Նախ երկու ժողովուրդներն էլ դարեր շարունակ զուրկ են եղել պետականությունից և կրել են միևնույն օտար՝ պարսկական, բյուզանդական, արաբական, սելջուկյան, մոնղոլական, օսմանյան լուծը: Բացի այդ՝ Արևմտյան Չայաստանը և քրդաբնակ շրջաններն իրենց աշխարհագրական դիրքի պատճառով մշտապես գտնվել են ավերիչ արշավանքների, պատերազմների թատերաբեմում: Օսմանյան պետության տիրապետության տակ հայ և քուրդ ժողովուրդները կողք կողքի ապրեցին ավելի քան հինգ դար, որն եղավ նրանց պատմության ամենամռայլ էջերից մեկը: Չայտնի է, որ օսմանյան պետության քաղաքականության անկյունաքարը եղել է իր տարածքում բնակվող ժողովուրդների հրահրումը միմյանց դեմ: Քրդերի միջոցով օսմանյան իշխանություններն իրականացնում էին հայերի բնաջնջման քաղաքականությունը: Քրդական ցեղերը, օսմանյան կառավարությունից ստանալով

⁹⁰ محمد رفعت الامام, *Մուհամմադ Ռիֆաթ ալ-Իման*, նշվ. աշխ., էջ 2:

⁹¹ «Ալ-Թակադդում», 1909, № 5:

⁹² Նույն տեղում, № 6, 24:

⁹³ Նույն տեղում, № 26:

«կանաչ» լույս, անխնա բռնությունների էին ենթարկում հայ ժողովրդին՝ տիրանալով նրանց տիրույթներին և ունեցվածքին: Հայ-քրդական հարաբերություններն ավելի սուր բնույթ ստացան Աբդուլ Համիդ երկրորդի կառավարման տարիներին, որը քրդերի միջոցով իրականացնում էր հայահալած քաղաքականություն⁹⁴: Հայերի գլխին իսկական պատուհաս դարձան 1891 թ. ստեղծված համիդիե գնդերը, որոնք ծառայում էին օսմանյան պետության ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքին քաղաքական խնդիրների համար: Այդ գնդերը կազմվեցին բացարձակապես քրդերից, որոնց համար ատելի էր կանոնավոր բանակում ծառայելը, բացի դրանից նրանք այժմ ծառայելու էին իրենց հարազատ վայրերում ու ունեին մի շարք արտոնություններ⁹⁵: Օսմանյան զորքերը համիդիե գնդերի մասնակցությամբ կոտորում և կողոպտում էին հայերին, որի գագաթնակետը եղավ 1894-1896 թթ. հայերի զանգվածային ջարդերը, որին զոհ գնաց ավելի քան 300000 հայ: 1908 թ. հետո էլ կառավարության գիտությամբ քրդերը կոտորում, կողոպտում էին հայերին: Իթքիհականներն առանձնակի թշնամությամբ էին լցված դեպի հայ ազատագրական շարժումը՝ այն դիտելով որպես կայսրության առավել վտանգավոր թշնամիներից մեկը: Նրանք քաջալերում էին քուրդ, թուրք, չերքեզ ելուզակներին, հափշտակիչներին, որոնք անպատիժ շարունակում էին հայերի թալանն ու ջարդը⁹⁶:

Քրդական վայրագությունների լուսաբանմանն անդրադարձել է նաև «Ալ-Թակադդում» թերթն իր բազմաթիվ համարներում⁹⁷: «Ալ-Թակադդումն» հայ-քրդական հարաբերությունների վերաբերյալ հողվածներում մեծ տեղ է հատկացնում 1913 թ. Կ. Պոլսի հայոց պատրիարքության ձեռնարկած քայլերի, հայ պատրիարքի՝ օսմանյան կառավարությանն ուղղած հուշագրերի լուսաբանման վրա⁹⁸:

Այսպիսով, սիրիական «Ալ-Թակադդում» թերթը արաբախոս ընթերցողներին հայտնում էր, որ երիտթուրքերը շարունակում են օսմանյան սուլթանների քաղաքականությունը՝ երկրի տարածքում բնակվող ժողովուրդներին հրահրելով միմյանց դեմ: Թուրքական տիրապետող շրջանները, քուրդ ժողովրդի մեջ նտապես «սպանելով» ազգային ինքնագիտակցության զգացումը և իսլամն օգտագործելով որպես լծակ, քրդերին օգտագործել են որպես գործիք՝ հայերին կոտորելու ու թալանելու համար:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ի մի են բերված ատենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին օսմանյան իշխանությունների կողմից իրականացված հայերի կոտորածների ու գաղթի, երիտթուրքական իշխանությունների՝ օսմանահպատակ ազգերին իրար դեմ հրահրելու քաղաքականությունը, ի թիվս բազմաթիվ այլ սկզբնաղբյուրների, մեկ անգամ ևս

⁹⁴ Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Եր., 1989, էջ 160-220:

⁹⁵ Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Եր., 1999, էջ 376-377:

⁹⁶ Իզմիրլյան Վ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Պեյրուք, 1964, էջ 153:

⁹⁷ «Ալ-Թակադդում», 1912, № 270:

⁹⁸ Նույն տեղում, 1913, № 396, 400:

գալիս են ապացուցելու 1894-1914 թթ. Սիրիայի խոշոր քաղաքներում՝ Դամասկոսում և Չալեպում, լույս տեսած արաբական պարբերական մամուլի էջերում հրատարակված տարաբնույթ նյութերը:

Սույն ուսումնասիրության մեջ փորձ է արվել գիտական շրջանակներին ներկայացնել 20-րդ դարի սկզբին Չայկական Չարցի վերաբերյալ մի շարք նոր հայանպաստ փաստեր և նյութեր:

Խնդրո առարկա հիմնահարցի քննությունը թույլ է տալիս կատարելու հետևյալ հիմնական եզրակացությունները.

- Սիրիական մամուլը 1877-1914 թթ. իր էջերում արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հայկական կոտորածների, գաղթի, օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների ելույթների, ճառերի ու նամակների մասին:
- Սիրիական մամուլում լույս տեսած հոդվածները մեկ անգամ ևս ցույց են տալիս 1912-1914 թթ. հայկական բարենորոգումների անցկացման հարցում թուրքիայի ներժողական քաղաքականությունը:
- 1909 թ. Կիլիկիայում հայերի կոտորածների պատմությանն առնչվող տարբեր հիմնահարցերի մեկնաբանությունը Չայոց ցեղասպանության պատմագրության մեջ տեղիք է տվել բուռն բանավեճերի և տարակարծությունների: Դրանցից կարևորագույններից է կոտորածների պատասխանատուների բացահայտման խնդիրը: Այս խնդրի առնչությամբ սիրիական արաբական մամուլում լույս տեսած հոդվածները մեկ անգամ ևս ապացուցում են, որ կոտորածների հրահրման մեջ առաջնային դեր է խաղացել երիտթուրքական կառավարությունը:
- Սույն աշխատությունը հատկապես օգտակար կարող է լինել Չայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում: Սիրիական մամուլը՝ մասնավորապես «Ալ-Թակադդում» թերթը, նոր տվյալներ է հաղորդում հայերի զոհերի քանակի վերաբերյալ, որոնք օգտակար կլինեն հայ պատմաբանների համար 1909 թ. Կիլիկիայում հայերի կոտորածների ընթացքում սպանված հայերի ընդհանուր թիվը ճշտելու համար: Այս հարցը խիստ էական է, քանի որ հայ պատմաբաններն այս առնչությամբ առաջադրել են իրարամերժ տեսակետներ. զոհերի թիվն, ըստ նրանց հաշվարկների, տատանվում է հիմնականում 20000-ից 30000-ի միջև:
- Չայոց ցեղասպանության պատմության մեջ կարևոր հարցերից է նաև 1909 թ. Կիլիկիայում հայերի կոտորածների ժամանակ հայերի կրած նյութական վնասների հարցը, որի շուրջ պատմաբանների գերակշռող մասը սպառիչ տեսակետներ չի հայտնել արժանահավատ և լիարժեք սկզբնաղբյուրների բացակայության պատճառով: Այս հարցում ևս սիրիական մամուլի հաղորդած տեղեկությունները կարող են օգտակար լինել վերոնշյալ խնդրի լուծման համար:
- «Ալ-Թակադդում» թերթում լույս տեսած հոդվածները մերկացնում են երիտթուրքական իշխանությունների՝ Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ժողովուրդներին իրար դեմ հրահրելու քաղաքականությունը: Թուրքական տիրապետող շրջանները, քուրդ ժողովրդի մեջ մշտապես «սպանելով» ազգային ինքնագիտակցության զգացումը, և իսլամն օգտագործելով որպես լծակ, քրդերին օգտագործել են որպես զործիք հայերին կոտորելու ու թալանելու համար: «Ալ-Թակադդում» թերթում լույս տեսած հոդվածները մեկ անգամ ևս

ապացուցում են, որ երիտթուրքական վարչակարգն արդուլհամիդյան բռնակալական վարչակարգի հետևորդն էր:

- «Ալ-Թակադդուն» թերթը, ի թիվս արաբ և օտար այլ աղբյուրների, մերկացնում է 1908 թ. Օսմանյան կայսրությունում անցկացված խորհրդարանական ընտրություններում երիտթուրքերի իրականացրած տարատեսակ ընտրախախտումները: Բացի այդ՝ թերթը մերկացնում է 1908 թ. հեղաշրջումից հետո կայսրությունում տիրող իրավիճակը:

Թեև 1908-1914 թթ. Սիրիայի արաբական պարբերական մամուլում

Հայկական հարցի վերաբերյալ լրատվության հոսքն այնքան էլ կանոնավոր չէր՝ պայմանավորված թուրքական իշխանությունների կողմից լրատվության դեմ կիրառվող զանազան արգելքների ու նյութական դժվարությունների հետ, այնուամենայնիվ, ուսումնասիրելով դրանցում տպագրված նյութերը, կարելի է որոշակի պատկերացում կազմել 1908-1914 թթ. թուրքական իշխանությունների կողմից իրականացված հայախալած քաղաքականության վերաբերյալ:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայ-քրդական հարաբերությունների լուսաբանումը սիրիական «Թակադդուն» թերթում (1910-1913 թթ.), էջ Պատմաբանասիրական հանդես, 2012, № 1, 113-122:

2. Հայերի մասին հիշատակումները սիրիական մամուլում (1894-1914 թթ.), Կանթեղ (գիտական հոդվածներ), 2012, № 3, էջ 134-143:

3. Կիլիկիահայության 1909 թ. կոտորածների լուսաբանումը սիրիական «Ալ-Թակադդուն» թերթում, Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), 2012, № 13, էջ 142-154:

4. Հայկական բարենորոգումների լուսաբանումը սիրիական «Ալ-Թակադդուն» թերթում, Լրաբեր հասարակական գիտությունների, 2013, № 1, էջ 94-100:

Есоян Мясник Арамаисович

ОСВЕЩЕНИЕ АРМЯНСКОГО ВОПРОСА В СИРИЙСКОЙ ПЕЧАТИ 1908-1914

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “ История Армении”.

Защита состоится 4-го июня 2013 г., в 14⁰⁰, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

Диссертация состоит из введения, трёх глав, выводов, использованных источников и списка литературы.

Во введение обоснована тема современности, цели и задачи, представлено научное новшество диссертации, дана теория литературы и первоисточников, касающихся главной задачи.

В первой главе – “Первые упоминания об армянах в сирийской арабской печати (1877-1914 гг.)” – обобщённым образом представлено пробуждение арабской национальной культуры, а также состояние сирийской, арабской печати в конце 19-ого в начале 20-ого вв.. Сирийские газеты представляли не только внешнее и внутреннее положение Османской империи, а также политику отуречивания всех народов, заселяющих Османскую империю.

Статьи, напечатанные в сирийских газетах, главным образом посвящены следующим темам:

- В эпоху Абдул Амид II и младотурков освещение осуществляемой политики в отношении национальных меньшинств.
- Освещениеразвитияарабскойкультуы.
- Критика политики отуречивания и восхваления свободолюбия.

Кроме того в этой главе представлены положение армян в Османской империи в 1877-1914 гг., картины резни и преселения, а также выступления армянских депутатов османского парламента, освещение писем в сирийской печати.

Во второй главе – “Османские парламентские выборы и освещение армянских реформ в сирийской газете “Ал-Такаддум” в 1908-1914 гг.” – представлено положение в Османской империи после переворота в 1908 г., освещение в газете “Ал-Такаддум” нарушений парламентских выборов со стороны младотурков. А также исследуются жалобы армянского патриарха, связанные с выборами.

Большое внимание уделяется задаче освещения армянских преобразований в 1912-1914 гг.. В 1908 г., когда в Османской империи младотурки пришли к власти, преследование армян не прекращалось. Это заставило армян искать пути для улучшения своей жизни. Воспользовавшись поражением Турции в Первой Балканской войне 1912 г. армяне напомнили ведущим государствам о соблюдении 61 статьи Берлинского пакта. Эти события были освещены в нескольких изданиях сирийской газеты “Ал-Такаддум”.

В третьей главе – “Освещение армянской резни в сирийской газете “Ал-Такаддум”” – представлено освещение резни киликийских армян, в газете “Ал-Такаддум”.

В номерах газеты, посвященных резне киликийских армян большое место уделено материальным утратам армян, которые остались без крова, описанно положения вдов и сирот во время резни, изучению причин киликийской резни. В этой главе освещены армяно- курдские отношения и жестокость курдов. В 1910-1913гг. сирийская газета “Ал- Такаддум” сообщает арабоязычному читателю, что младотурки продолжают политику османских султанов, провоцируя народы, населяющие страну друг против друга.

Турецкие господствующие круги, постоянно уничтожая в курдском народе чувство национального самосознания, и используя ислам как рычаг, использовали курдов как орудие истребления и ограбление армян.

В заключение изложены основные итоги и выводы исследования.

Esoyan Myasnik Aramays

The Armenian question in Arabian media of Syria 1908-1914

Dissertation for the degree of Doctor of History on the specialization
“History of Armenia” 07.00.01

The defense of the dissertation will be held on 4 June 2013, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Bagramyan Ave. 24/4).

Summary

The present dissertation is dedicated to the presentation of the Armenian question in Arabian media of Syria 1908-1914

The dissertation consists of introduction, three chapters, a conclusion and a list of the used sources and literature. The modernity of the topic, goals and tasks are specified the scientific novelty of dissertation is represented and the existing literature theory and primer sources concerning this problem are also given in introduction.

The first chapter - “The first notions about Armenians in Arabian media of Syria 1877-1914”- represents briefly the awakening of the Arabian national cultural life as well as the existence of Arabian media of Syria at the end of 19th and the beginning of 20th century.

The Syrian newspaper presented not only the inner and outer situation of Ottoman Empire also turkished policy against all the peoples of the Empire. The articles published in the newspapers of Syria mainly referred the following points.

The presentation of implementing policy of Abdul Humid II and Young Turks against national minorities.

The presentation of the Arabian culture improvements

Turkished policy criticizing and the freedom loving appreciation

Besides in the following chapter the conditions of the Armenians living in Ottoman Empire, the picture of massacre and deportation, the Syria newspapers published the Armenian deputies’ speeches. Ottoman assembly Armenian deputies’ speeches and letters are also clarified in this chapter.

In the second chapter – “Ottoman Assembly elections and Armenian improvements presentation in the Syrian “Al-Takaddum” newspaper (1908-1914)”- are presented the existing situation in Ottoman Empire after rebel 1908. The falsification made by the Young

Turks during Ottoman Assembly elections and the complaint appeals, of Armenian Patriarch connected with that election is also examined.

Great attention is paid to the presentation of Armenian improvements problem in 1912-1914. In 1908 after the abolition of Abdul-Hamidian despotic regime and the hold of powers by Young Turks the pursuits and cruelties against Western Armenians did not cease. The latter were forced to seek for ways to improve their condition. The Western Armenians tried to derive benefit from Turkey's defeat in the first Balkan war and remind states of the obligations confirmed by 61th article of Berlin convention. The implementation of reforms in Western Armenia was represented in sirian "Al-Takaddum" newspaper.

The third chapter - "Armenians Genocide presentation in " Al-Takaddum" newspaper" - states the presentation of Cilicia Armenians Genocide in 1909 in the mentioned newspaper. A great attention is given to the material losses of Armenians during the Genocide, the Armenians who became homeless in the result of genocide, orphans, widows state descriptions, the studies of Cilicia massacre causes in the published newspapers referring to Cilicia massacre.

The same chapter also states the presentation of Armenian-Kurdish relations, Kurdish violence during that period. The Syrian "Al-Takaddum" newspaper tells Arabian speaking readers that Young Turks carried on Ottoman Sultans policy instigating the nations living in the country area against each other.

The regions ruled by Turkish used the Kurdiens as a tool for slaying and robbing Armenians , continually destructing in the Kurds the sense of national self conscious and using Islam as a weapon.

The main findings and results of the study are summarized in the conclusion.